Թռուցիկների էլեկտրոնային ծանուցումը սկսվում է փետրվարի 6-ին

Փետրվարի 6-ին Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը կսկսի նոր թռուցիկների էլեկտրոնային հաղորդակցման գործիքը, որը կոչվում է «Peachjar»: Այս «կանաչ» մտահաղացումը հնարավորություն կտա մեր ծնողներին թռուցիկներին ծանոթանալ երեք կերպ՝ առցանց, էլեկտրոնային փոստի և GUSD-ի մեր ծրագրի միջոցով: Բոլոր դպրոցների և կրթաշրջանի վերաբերյալ թռուցիկները հասանելի կլինեն առցանց՝ «էլեկտրոնային պայուսակի (“electronic packpack”)»-ի մեջ, որտեղ կարող են դրանք տարբերակվել, դասավորվել և պահվել:

Ինչպե՞ս եմ ստանալու թռուցիկներ երեխայիս դպրոցից

Դուք թռուցիկներ կստանաք երեք տարբեր ձևով՝

1. Էլեկտրոնային փոստ

Փետրվարի 6-ին, դուք ողջույնի էլեկտրոնային նամակ կստանաք մեր ծառայություն մատակարարողից (Peachjar), որը կպարունակի գործածողի անունը և գաղտնաբառը: Այն տրվում է ձեզ, որպեսզի դուք հնարավորություն ունենաք այցելել ձեր բաժինը և կարգավորել թռուցիկները ստանալու տարբերակը: <u>Կարիք չունեք մուտք գործել, որպեսզի ստանաք կամ տեսնեք դպրոցի էլեկտրոնային թռուցիկները:</u> Դրանք միշտ կուղարկվեն ձեր նամակների մեջ: Եթե չեք ցանկանում ստանալ թռուցիկները էլ. փոստի միջոցով, կարող եք դադարեցնել ձեր բաժանորդագրումը:

2. Առցանց

Փետրվարի 6-ից սկսած՝ կարող եք տեսնել դպրոցի էլեկտրոնային թռուցիկները, պարզապես սեղմելով Peachjar-ի վրա՝ ձեր դպրոցի կայք էջում (կայքի shortcut-երի մեջ), որպեսզի կարողանաք մուտք գործել ձեր առցանց «էլեկտրոնային պայուսակը»:

3. GUSD-ի ծրագիր

Փետրվարի 6-ից սկսած՝ GUSD-ի ծրագրի մեջ կարող եք հետևել Peachjar-ին՝ ընտրելով դա «Settings»-ի մեջից (Settings -> Follow Schools -> Your School Name -> Peachjar): Այնուհետև, ծրագրի մեջ ընտրեք Peachjar-ը, որպեսզի տեսնեք դպրոցի վերաբերյալ թռուցիկները ձեր «էլեկտրոնային պայուսակի» մեջ:

Peachjar համակարգը բացառապես կիրառվում է դպրոցի թռուցիկները ծանուցելու համար: <u>Ձեր էլ. փոստի հասցեն չի տրամադրվի ոչ մեկին՝ որևէ այլ նպատակով:</u> Շնորհակալ ենք, որ աջակցում եք մեզ՝ ծնողներին դպրոցական ծրագրերի, գործունեության և միջոցառումների մասին տեղեկացնելու համար: